ՄԻ ԷՋ ԱՐՑԱԽՈՒՄ ՌԱԶՄԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ*

ՄՀԵՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Պ.գ.թ., դոցենտ

Ինչպես Արցախի Հանրապետության հասարակական-քաղաքական ու տնտեսական, այնպես էլ բանակաշինության ոլորտներում տեղ գտած մի շարք գործընթացների արդյունքում հանրապետության զինված ուժերի մարտունակությունը հասցվել է որակական նոր աստիճանի: Այդ մասին տեղեկատվություն են պարունակում մեր հանրապետության ՁԼՄ-ները, հատկապես զինվորական(ռազմական) տպագիր, եթերային ու էլեկտրոնային մամուլը: Խնդրո առարկա թեմային մենք մասնավորապես անդրադարձել ենք ՊԲ «Մարտիկ» պաշտոնաթերթում [1]:

Պաշտպանության բանակում շարունակաբար զարգացվել են պատերազմական փորձն ու ակադեմիական գիտելիքները, բարձր ոգին ու ամուր կարգապահությունը, անձնակազմի մասնագիտական արհեստավարժությունն ու հզոր արդիական սպառազինությունը զուգակցելու տեսական ու գործնական հմտությունները [2]: Հեղինակավոր փորձագետների գնահատմամբ՝ ներկայումս ՊԲ տարածաշրջանում առանձնանում է իր մարտունակությամբ եւ ի վիճակի է կատարելու ԼՂՀ անվտանգության երաշխավորի իր առաքելությունը, ինչը վճռական գործոն է հակամարտության կարգավորման գործընթացում: Տարեցտարի ավելի ենք համոզվում, որ հզոր ու մարտունակ բանակը խաղաղության, արժանապատիվ գոյության ու բարգավաճման գլխավոր երաշխիքն է, երկրի պաշտպանունակության եւ սահմանների անձեռնմխելիության գրավականը [3]:

2012թ. եւս բոլոր ջանքերը նպատակաուղղված են եղել մարտական ու զորահավաքային պատրաստականության, մարտական հերթապահության եւ ինժեներական սարքավորումների հետագա կատարելագործմանը, կայուն պաշտպանության ստեղծմանը, զինվորական կարգապահության բարձրացմանը, սպառազինության և ռազմական տեխնիկայի բարձր աստիճանի մարտունակության ապահովմանը, զինծառայողների կյանքի ու կենցաղի պայմանների հետագա բարելավմանը [4]:

Պլանավորված բոլոր միջոցառումները կյանքի են կոչվել Հայրենական մեծ պատերազմում Հաղթանակի օրվա, ՊԲ կազմավորման և Շուշիի ազատագրման 20-ամյա հոբելյանով պայմանավորված համաժողովրդական խանդավառության մթնոլորտում՝ կարևորելով դրանցից յուրաքանչյուրի ճիշտ և ժամանակին անցկացումը: Մայիսի 8-ին և 9-ին Շուշի բերդաքաղաքում, ապա Ստեփանակերտում մեծ շուքով ազգովի նշվել է եռատոնը: Հանդիսությունների թագն ու պսակը դարձավ Վերածննդի հրապարակում կազմակերպված զորահանդեսը [5]: Այն իր շքեղությամբ, կազմակերպվածությամբ, ուժերի և միջոցների ընդգրկվածությամբ բացառիկ էր: Նրա նախապատրաստման և անցկացման հետևանքով

* Հոդվածն ընդունվել է 21.01.2013:
Հոդվածը տպագրության է երաշխավորել ՄՄՀ պատմության ամբիոնը:

առաջացած հզոր լիցքով էր պայմանավորված նաև ուսումնական տարվա բանակային հաջող գործընթացը:

ՊԲ 2012թ. մարտական պատրաստության պլանի կատարման արդյունքում բանակի վարչությունում, միավորումներում և զորամասերում արձանագրվել է առաջընթաց, առանձնապես՝ մարտական պատրաստականության և պատրաստության, զինվորական կարգապահության կատարելագործման գործում, ինչը և նպաստել է մեր անվտանգության երաշխավորի մարտունակության հետագա բարձրացմանը:

Հաջողությունների հիմնական գրավականն այն էր, որ ծառայողական ու գործառութային պարտականությունների եւ մարտական խնդիրների կատարումը, որպես կանոն, ուղեկցվել է պարտքի վեհ զգացումով, բարձր պատասխանատվությամբ և վճռականությամբ, ինչպես նաեւ՝ զինծառայողները հանդես են բերել գիտակցական վերաբերմունք, դրսևորել աշխույժ նախաձեռնողականություն և ստեղծագործական մոտեցում, նպատակին հասնելու եւ դժվարությունները հաղթահարելու համառություն և հաստատուն կամք: Բարենպաստ զգալի ազդեցություն են ունեցել պաշտպանական բարեփոխումները, հատկապես այդ շրջանակներում իրականացված հաստիքակառուցվածքային փոփոխությունները, սպառազինության և ռազմական տեխնիկայի համալրումն ու արդիականացումը:

2012թ. ուսումնական տարվա զորքերի պատրաստության պլանով նախատեսված մարտական պատրաստականության բոլոր միջոցառումների իրականացումը նոր մակարդակի է հասցրել ՊԲ ծառայությունների, զորատեսակների և զորամասերի մարտունակությունը:

Ուսումնական տարվա ընթացքում կատարվել են պլանային ու հանկարծակի ստուգումներ մի շարք զորամասերում, որոնց արդյունքում արձանագրվել է, որ ստորաբաժանումները պատրաստ են մարտական պատրաստականության տարբեր աստիճաններում կատարելու իրենց առաջադրված խնդիրները:

Հերթապահ ուժերի մարտական պատրաստականության, ինժեներական և ամրաշինական կառույցների կատարելագործման, կապի վիճակի բարելավման, բարոյահոգեբանական, կենցաղային ու սանիտարահիգիենիկ, տեխնիկական, թիկունքային, բժշկական և սոցիալական ապահովման հարցերի ուղղությամբ կատարված մեծածավալ աշխատանքները նկատելիորեն բարելավել են մարտական հերթապահությունը:

Այդ նույն նպատակով յուրաքանչյուր հերթափոխից առաջ մարտական հերթապահության նախապատրաստման ավանում դիրքի ավագների հետ առանձին պարապմունքներ են անցկացվել՝ կարևորելով դիրքի ավագի պարտականությունների իմացության, դիրքում ծառայության կազմակերպման հրահանգի կատարման կարգի ու մարտական հերթապահության ընթացքում անվտանգության ապահովման հարցերին: Մարտական հերթապահության փոխարինմանը նախորդող զորամասերի մշտական տեղակայման վայրերում զինվորական արարողակարգի անցկացումը ոգևորության լիցքեր է հաղորդել անձնակազմին, բարձրացրել պատասխանատվության զգացումը: «Մարտական հերթապահության հերթափոխի կարգը» ձեռնարկի պահանջների յուրացումը հեշտացնելու

նպատակով՝ ՊԲ-ի շտաբում նկարահանվել և բոլոր զորամասերին հատկացվել է «Մարտական դիրքի հերթափոխի կարգը» ուսումնամեթոդական ֆիլմը: Այս ամենի արդյունքում նկատելիորեն բարելավվել է մարտական հերթապահությունը, ինչը հակառակորդի մշտական սադրանքների պարագայում ավելի քան հրատապ է:

Հակառակորդը, շարունակելով ագրեսիվ քաղաքականությունը, ձգտում է մշտապես կորուստներ հասցնելու ՊԲ առաջապահ ստորաբաժանումներին: Դա իր արտահայտությունն է գտել 2012թ. ընթացքում հակառակորդի կրակի ինտենսիվության աճի մեջ. գրանցվել է հրադադարի ռեժիմի 13274 խախտման դեպք, ինչը 2011թ. դեպքերի համեմատ ավելի է 21%-ով [6]:

Առաջնային գծում կատարելագործվել է լարային կապը, պարբերաբար ստուգվել է լարային կապի լսելիության վիճակը մինչև դիրք, կատարվել է համապատասխան վերլուծություն և անբավարար լսելիություն ունեցող դիրքերում, կապի որակի բարձրացման ուղղությամբ, կատարվել են համապատասխան աշխատանքներ:

ՊԲ միավորումներում և զորամասերում մեծածավալ աշխատանքներ են կատարվել ինժեներական արգելափակոցների կատարելագործման, բանակային բնագծի կահավորման և զինծառայողների անվտանգ ծառայության ապահովման ուղղությամբ:

Արտապլանային աշխատանքների շրջանակներում բարելավվել են պաշտպանության տեղամասի դիրքերը: Առաջնային գծում կատարելագործվել է դիտարկման համակարգը: Մեծածավալ աշխատանքներ են իրականացվել մարտական դիրքերում ինժեներական ոչ պայթյունային արգելափակոցների կատարելագործման ուղղությամբ: Լրացուցիչ միջոցներ են ձեռնարկվել անվտանգության բարձրացման ուղղությամբ:

ՊԲ և միավորումների վարչություններն, ընդգրկվելով զորախաղերով ուղեկցված օպերատիվ հավաքներին, զգալիորեն կատարելագործել են իրենց տեսական ու գործնական հմտությունները:

Շարունակվել է համագործակցությունը տեղական ինքնակառավարման մարմինների հետ, մասնավորապես՝ նրանց դերն ու նշանակությունը բարձրացնելու և նրանց կողմից իրականացվող միջոցառումները պետության անվտանգության ապահովման գործում պարզաբանելու նպատակով մարտի 13-ից 15-ը անցկացվել են հավաքներ ԼՂՀ շրջվարչակազմերի և համայնքների ղեկավարների հետ:

Հոկտեմբերի 1-ից 13-ն ընկած ժամանակահատվածում ՊԲ-ն մասնակցել է ռազմավարական հրամանատարաշտաբային զորավարժություններին (ՌՀՇՁ), որոնց ընթացքում ՊԲ միավորումներն ու զորամասերը զբաղեցրել են իրենց մարտական կիրառման համար նախորոշված շրջանները, ամբողջությամբ բացազատվել է ղեկավարման համակարգը: Ելնելով ստեղծված իրադրությունից՝ մարտակարգերի առանձին տարրեր և ղեկավարման կետեր կատարել են խուսավարում ու ծավալվել պահեստային կամ նոր նախանշված շրջաններում [7]:

Առանձնահատուկ էր սույն թվականի հոկտեմբերի 15-ից-23-ը ՌՀՇՁ իրադրության ներքո կենտրոնական ենթակայության զորամասերի հետ անցկացված

մարտական հրաձգությամբ մարտավարական զորավարժությունը:

Միավորումների հրամանատարների ղեկավարությամբ՝ ենթակա զորամասերի հետ տեղանքում պլանավորվել և անցկացվել են երկաստիճան հրամանատարաշտաբային զորավարժություններ:

ՊԲ վարչությունում, միավորումներում և զորամասերում ևս անցկացվել են երկուական համատեղ և առանձին շտաբային մարզումներ՝ հրամանատարների և համապատասխան պետերի ղեկավարությամբ, ընդ որում՝ տեղերում համատեղ մարզումներն անցկացվել են երկաստիճան՝ ընդգրկելով ստորաբաժանումների վարչությունները:

ՊԲ միավորումներում և զորամասերում կատարված 2012-ի ուսումնական տարվա մարտական պատրաստության պլանային միջոցառումները ուղղված են եղել զորքերի մարտական պատրաստականության, կարգապահության բարձրացման ու ԼՂՀ պետական սահմանի հուսալի պահպանությանը և պաշտպանությանը:

Ուսումնական տարվա խնդիրների պահանջներից ելնելով՝ հրամանատարական պատրաստությունում հիմնական ուշադրությունը դարձվել է մարտավարական օղակի սպաների մասնագիտական և անհատական պատրաստության մակարդակի բարձրացմանը, ինչպես նաև նրանց մեթոդական պատրաստությանը:

Ստորաբաժանումների ներդաշնակումը իրականացվել է սահմանված ժամանակահատվածում: Ներդաշնակման առաջին շաբաթներում, համապատասխան փուլերում, զորամասերում պլանավորվել և անցկացվել են ջոկերի, դասակների ցուցադրական մարտական հրաձգություններ՝ պաշտպանողական, հարձակողական թեմաներով: Ներդաշնակման ժամանակ անձնակազմը կատարելագործել է ուսուցման բոլոր առարկաներից, հատկապես՝ մարտավարական, կրակային և շարային պատրաստություններից, ձեռք բերած կարողությունները ու հմտությունները: Ջոկերի և դասակների հրամանատարներն ամրապնդել են իրենց տեսական գիտելիքները՝ ձեռք բերելով ստորաբաժանման ղեկավարման փորձ, կատարելագործելով մարտի կազմակերպման ունակությունները:

Վաշտերի ներդաշնակումը յուրաքանչյուր ուսումնական փուլում ավարտվել է մարտավարական զորավարժություններով, որոնց ընթացքում կատարելագործվել են անձնակազմի դաշտային վարժվածությունը և մարտի տարբեր տեսակներում մարտական խնդիրների կատարման պատրաստականությունը:

Ավելի բարձր օղակում մարտավարական զորավարժության նախապատրաստման և անցկացման գործում հրամանատարական կազմի մոտ միատեսակ մոտեցում ձևավորելու նպատակով, օգոստոսի 13-ից 16-ն ընկած ժամանակահատվածում մի շարք զորամասերում անցկացվել են մարտական հրաձգությամբ ցուցադրական գումարտակային մարտավարական զորավարժություններ: Ծավալված ցուցադրման կետերում զորամասերի հրամանատարներին և նրանց տեղակալներին, ստորաբաժանումների հրամանատարներին ցուցադրվել են առաջադրանքը ստանալուց հետո հրամանատարի և շտաբի աշխատանքի կարգը, հրաձգային վաշտի մարտավարական գործողությունները պաշտպանողական և հարձակողական մարտերի ժամանակ և այլն:

Պլանային պարապմունքների պատշաճ մակարդակով և արդյունավետ անց-

կացումը դրական ազդեցություն է ունեցել ամփոփիչ ստուգումներում:

ՊԲ անձնակազմի ֆիզիկական պատրաստությունը ուղղված էր զինծառայողների ֆիզիկական հատկանիշների կատարելագործմանը և սպայակազմի ու սերժանտների մեթոդական պատրաստվածության մակարդակի բարձրացմանը: Տարվա մարզական միջոցառումների օրացուցային պլանի համաձայն՝ ՊԲ-ում երկու փուլով (ներզորամասային ու փնջային) անցկացվել են վոլեյբոլի, թենիսի, ֆուտբոլի առաջնություններ, երեք փուլով (ներզորամասային, փնջային, համաբանակային)՝ շախմատի առաջնություն և այլ մրցումներ: «Լավագույն վաշտ N27 վարժությունից» ՀՈՒ մասշտաբով ՊԲ թիմը գրավել է 2-րդ տեղը: Համաբանակային 15-րդ սպարտակիադայի եզրափակիչ փուլում ՊԲ հավաքական թիմերը գրավել են 1-ին, 2-րդ և 4-րդ տեղերը: ԼՂՀ մասշտաբով մասնակցելով շախմատի և թենիսի առաջնություններին՝ ՊԲ ներկայացնող մարզիկները գրավել են առաջին տեղերը:

ՊԲ լավագույն տանկային ՀՄՄ-1, ՀՄՄ-2 անձնակազմները մասնակցել են ՀՈՒ մասշտաբով անցկացված մրցակցության, որի ժամանակ ՊԲ տանկի անձնակազմը զբաղեցրել է 3-րդ տեղը, իսկ ՀՄՄ-1-ի անձնակազմերը՝ 1-ին, 2-րդ տեղերը:

Ապրիլի 13-ին անցկացվել են ՊԲ «Լավագույն գումարտակի հրամանատար» մրցումներ, որտեղ 1-ին տեղ է գրավել փոխգնդապետ Ս. Ս. Գրիգորյանը:

Շարունակվել են ուսումնանյութական բազայի կառուցման և կատարելագործման աշխատանքները: Ուսումնանյութական բազայի ստեղծման, կատարելագործման, պահպանման և նյութական միջոցների հաշվառման ուղղությամբ աշխատանքները լավ են կազմակերպվել «Ասպարեզ» ուսումնական կենտրոնում, հրետանային զորամասերում, առաջընթաց է գրանցվել մի շարք այլ զորամասերում:

ՊԲ-ի հրետանային զորամասերում և ստորաբաժանումներում 2012թ. ուսումնական տարում պլանավորված միջոցառումները հիմնականում կատարվել են:

Տարվա ընթացքում ճշտվել են հրետանու մարտական պատրաստականության ու կիրառման պլանները, այլ զորատեսակների հետ փոխգործակցության հարցերը, ընդհանրացվել են հետախուզական տվյալները, հայտնաբերված կարևոր նշանակետերը ընդունվել են կրակային խոցման համար: Ստուգվել է հրետանային զորամասերի ու ստորաբաժանումների մարտական պատրաստականությունը, անձնակազմի կողմից մարտական խնդիրների իմացությունը, մարտական պատրաստականության ու կիրառման փաստաթղթերի համապատասխանությունը ստացված խնդիրներին: Բոլոր ստուգումների անցկացման ժամանակ համապատասխան հրամանատարներին ու պետերին ցուցաբերվել է անհրաժեշտ մեթոդական օգնություն: Ուսումնական տարում կազմակերպվել և տեղանքում, ղեկավարման բջիջների բացազատմամբ անցկացվել են ՊԲ հրետանու, ինչպես նաև ճամբարային հավաքների ժամանակ հրետանային զորամասերի ու ստորաբաժանումների ծավալմամբ՝ կրակի կառավարման վարժանքներ:

2012թ. տարվա խնդիրների պահանջների և պլանային ինժեներական աշխատանքների համաձայն կահավորվել են նոր կրակային դիրքեր, հրամանատա-

րական դիտակետեր, ծավալման բնագծեր և կենտրոնացման շրջաններ եւ այլն: Թեև ընդհանուր առմամբ կատարված ինժեներական աշխատանքներն ու մարտակարգերի ինժեներական կահավորումը բավարար մակարդակի են, դեռևս դրանց քողարկման աստիճանը բարձրացնելու տեղ կա: Առկա թերություններով ու բացթողումներով հանդերձ՝ ՊԲ հրետանին ի վիճակի է կատարելու իր առջև դրված մարտական առաջադրանքները:

Հրետանային զորամասերում և ստորաբաժանումներում պարապմունքներն անցկացվել են ըստ ներդաշնակման փուլերի: Յուրաքանչյուր փուլում անցկացվել են հրետանային ճամբարային հավաքներ՝ ընդգրկելով բոլոր հրետանային զորամասերն ու ստորաբաժանումները, ինչպես նաև մրցումներ՝ լավագույն մասնագետները, ջոկերը, հաշվարկները, դասակներն ու մարտկոցներն ի հայտ բերելու նպատակով: Տարվա ընթացքում երկու անգամ ստուգվել է ջոկերի (հաշվարկների), դասակների, մարտկոցների, դիվիզիոնների զգալի մասը: Անցկացվել են նաև դիվիզիոնային, մարտկոցային մարտավարական զորավարժություններ: Ընդ որում դիվիզիոնային և մարտկոցային ցուցադրական զորավարժություններն անցկացվել են որպես ցուցադրական: ՊԲ-ի հրետանային զորամասերի, զորամասի հրետանու հետ տեղանքում անցկացվել են կրակի կառավարման մարզումներ:

Շարունակվել են մարտկոցների (դասակների) փոխադրովի ուսումնանյութական բազայի, ուսումնական սարքավորումների և դիտողական նյութերի լրակազմի ստեղծման և առկա լրակազմի կատարելագործման աշխատանքները:

ՊԲ ՀՕՊ զորամասերում և ստորաբաժանումներում ևս 2012թ. պատրաստության պլանով նախատեսված բոլոր միջոցառումները կատարվել են: ՀՕՊ միջոցների հետ անցկացված շրջաթռիչքներով ստուգվել են ՀՕՊ համակարգի արդյունավետությունը, մարտական տեխնիկայի վիճակը, կատարելագործվել՝ հաշվարկների մարտական աշխատանքի վարման գործնական ունակությունները: ՀՕՊ հերթապահ ուժերի, մարտական հերթապահության նախապատրաստման ու բուն գործընթացի ստուգումներով, մարտական հաշվարկները ունակ են կատարելու մարտական հերթապահության խնդիրները:

ՊԲ-ի միավորումների և զորամասերի կապի ստորաբաժանումներում, համաձայն ՀՀ ԶՈՒ կապի ստորաբաժանումների մարտական պատրաստության ծրագրի, անցկացվել են բոլոր պարապմունքները: Յուրաքանչյուր ամիս ԶՈՒ և ՊԲ մասշտաբով անցկացվել են կապի վարժանքներ, այդ թվում ԱԿՀ-ով, որի ժամանակ ստուգվել է կապի համակարգի պատրաստականությունը, տեղեկատվության ժամանակին և ճիշտ ընդունումը և հաղորդումը, ինչպես նաև բարձրացվել են անձնակազմի տեսական և գործնական ունակությունները:

2012 ուսումնական տարում ՌԷՊ ծառայությունը կազմակերպվել է համաձայն վերադաս հրամանատարության հրամանների և ՌԷՊ բաժանմունքի պատրաստության պլանի: Անցկացված միջոցառումներն ուղղված էին զորամասերում ՌԷՊ միջոցառումների կազմակերպմանը, ՌԷՊ առանձին վաշտում մարտական պատրաստականության, մարտական պատրաստության, զորքերի ծառայության և կարգապահության ամրապնդմանը:

ՊԲ ինժեներական ստորաբաժանումներում ուշադրություն է դարձվել մար-

տավարամասնագիտական և մասնագիտական պատրաստությանը, անձնակազմի դաշտային վարժվածության և ներդաշնակ գործողություններին:

Մայիսի 14-ից 26-ը և օգոստոսի 20-ից սեպտեմբերի 2-ը անցկացվել է ինժեներասակրավորային դասակների դաշտային ելք, որտեղ ուշադրություն է դարձվել ջոկերի և դասակների կազմով ականապայթյունային արգելափակոցների տեղադրման և արգելափակոցներում անցումների բացման գործողություններին, ինչպես նաև անձնակազմի մասնագիտական պատրաստության մակարդակի բարձրացմանը:

2012թ. ընթացքում համազորային ստորաբաժանումների ինժեներական պատրաստությունը պլանավորված է եղել համաձայն ուղեցույց փաստաթղթերի: Ինժեներական բաժնի կողմից պարբերաբար ստուգվել է միավորումների, զորամասերի ինժեներական պատրաստության վիճակը և մակարդակը, լուրջ ուշադրություն է դարձվել անձնակազմի կողմից ինժեներական ապահովման նորմացույցների կատարմանը:

Ռազմատեղագրական ծառայությունը համալրվել է նոր հաստիքով և անհրաժեշտ տեխնիկական միջոցներով: Տեղագրական քարտեզներ ստանալու և դրանց պատճենահանման գործընթացի հետ կապված բոլոր հայտերը բավարարվել են: Միավորումների տեղագրական ծառայություններում ևս ներդրվել են նոր համալիրներ, որոնց օգտագործման ուսուցումը ընթացքի մեջ է:

2012 թ. ընթացքում գաղափարադաստիարակչական և հասարակական-պետական պատրաստության ուղղությամբ ևս արձանագրվել է որոշակի առաջընթաց, մասնավորապես բարձրացել է պարապմունքների կազմակերպման որակը, ընդլայնվել է զինծառայողների աշխարհայացքը, մեծացել է պատասխանատվությունը: Կրտսեր հրամանատարների, մարտական դիրքերի ավագների դերի բարձրացման, սերժանտական խորհուրդների աշխատանքների ակտիվացման նպատակով՝ մայիսի 17-ին և նոյեմբերի 12-ին անցկացվել են ՊԲ սերժանտական հավաքներ, բարելավվել է զորամասերում անցկացվող սերժանտական օրերի արդյունավետությունը: Մշակվել և զորքեր են առաքվել ենթակա ստորաբաժանումներում արատավոր երևույթների կանխարգելմանն ուղղված աշխատանքների կազմակերպման, զինծառայողների խրախուսման միասնական կարգ սահմանելու վերաբերյալ ՊԲ հրամանատարի կարգադրությունները, ոչ կանոնադրական փոխհարաբերությունների երևույթները վերացնելուն ուղղված միջոցառումների պլանները, կանխարգելիչ բովանդակությամբ քարոզչական պլակատներ:

Ուսումնասիրվել են սպայակազմի բարոյահոգեբանական վիճակը, երիտասարդ սպաների ծառայության կազմակերպման խնդիրները, անցկացվել են սոցիոլոգիական հարցումներ:

Մշակվել է զինվորի անհատական գրքույկի նոր տարբերակը, որը «Հայրենիքի պաշտպանի անհատական գրքույկ» անվանումով գործածության է ընդունվել ՀՈՒ-ում: ԱՀՏԱ բաժնում մշակվել և հրատարակվել է ԱՀՏԱ գծով անհրաժեշտ փաստաթղթերի մեթոդական ուղեցույցը [8]: Վերահսկվել են նորակոչիկների հետ տարվող աշխատանքները: Նախապատրաստական փուլն ավարտելուց հետո, նախքան նոր ստորաբաժանումներին բաշխելը, բոլոր ժամկետային զինծա-

ռայողներին տրամադրվել է արձակուրդ, ինչն էապես բարելավել է նրանց բարոյահոգեբանական վիճակը, նպաստավոր պայմաններ ստեղծել նոր կոլեկտիվներում հարմարեցման գործընթացը սահուն կերպով իրականացնելու համար:

Հունիսի 21-ին կայացած ՊԲ Ռազմական խորհրդի նիստում քննարկվել և զորքեր է ուղարկվել ԱՀՏԱ բաժնում մշակված ՊԲ միավորումներում և զորամասերում զինվորական կարգապահության գնահատման կանոնակարգի նոր տարբերակը, որի պահանջներով հստակորեն առաջնորդվելը կնպաստի կարգապահության բարձրացմանը: Զորամասերում անցկացվել են տոն օրերին նվիրված միջոցառումներ, համերգաշարեր, զինծառայողների և նրանց հարազատների հետ հանդիպումներ, հասարակական կազմակերպությունների շրջայցեր, վերահսկվել է զինվորների հանգստի, կիրակնօրյա միջոցառումների կազմակերպման գործընթացը, կազմավորվել է ՊԲ «Ասպետ» երգի-պարի ինքնագործ համույթը: Զորամասերում շարունակվել են տեղեկատվության և ժամանցի նոր սենյակների, քարոզչական վահանակների ձևավորման և կահավորման աշխատանքները: Կահավորվել են տասնյակ ժամանցի և տեղեկատվության սենյակներ: Զինվորների հանգստի, կիրակնօրյա միջոցառումների կազմակերպման ուղղությամբ առաջընթաց է արձանագրվել բոլոր զորամասերում:

Բացի ֆաշիզմի դեմ տարած Հաղթանակի 67-րդ տարեդարձը, Շուշիի ազատագրման, ՊԲ կազմավորման 20-ամյա հոբելյանը հանդիսավորությամբ նշելուց, կազմակերպվել են տոնական միջոցառումներ՝ նվիրված ՀՀ և ԼՂՀ անկախության հռչակման 21-ամյակին, ՀՀ առաջին Հանրապետության, Կանանց միջազգային, Մայրության և գեղեցկության տոն օրերին և այլ հիշարժան տարեթվերի: Մասնավորապես ապրիլի 7-ին, Մայրության և Գեղեցկության օրվա առթիվ, շնորհավորական բացիկներ և ծաղկեփնջեր են հանձնվել զորակոչված ժամկետային զինծառայողների մայրերին:

Ուսումնասիրվել է «Սպայի պատվի դատարանների», «Սպայական ժողովների», «Սերժանտական խորհուրդների», գերատեսչական խմբերի, հասարակական ակտիվների աշխատանքների կազմակերպումը, հրամանատարների ԱՀՏԱ գծով տեղակալներին ցուցաբերվել է մեթոդագործնական օգնություն [9]:

2012թ. ուսումնական տարվա զինվորական կարգապահության ամրապնդման և իրավախախտումների կանխարգելման ուղղությամբ զինվորական իրավապահ մարմինների հետ մշակվել է համատեղ միջոցառումների պլան: Զորամասերում ուսումնասիրվել է զինծառայողների արձակուրդների, արձակումների, տույժերի և խրախուսանքների տրման օրինականությունը:

Ուսումնասիրվել է մարտական հերթապահությունում ընդգրկված զինծառայողների բարոյահոգեբանական վիճակը, մշտական տեղակայման վայրում ուսումնասիրվել է մարտական հերթապահության մեկնող անձնակազմի, այդ թվում՝ մարտական դիրքերի ավագների, պատրաստության աստիճանը: Իրականացվել են դաստիարակչական աշխատանքների և զինվորական կարգապահության վիճակի վերլուծություններ և քննարկումներ:

Միավորումներում և զորամասերում զորքերի ծառայությունը կազմակերպվել է համազորային կանոնադրությունների և համապատասխան փաստաթղթերի պահանջների համաձայն:

Մշտապես ուշադրության կենտրոնում է պահվել վերահսկիչ խմբերի կողմից ստուգումների ժամանակ ի հայտ բերված թերությունները ժամանակին վերացնելու գործընթացը, ինչպես նաև բարձրացվել են արձանագրված թերությունների վերացման արդյունավետությունը և օպերատիվությունը:

Մի շարք զորամասերում նպատակային ստուգվել են օրվա վերակարգի նախապատրաստման, պահակային ծառայության գործընթացի, ՀԱԿ-ում ծառայության կազմակերպման հարցերը:

2012թ. ուսումնական տարվա ընթացքում տեխնիկական ապահովման հիմնական խնդիրներն են համարվել՝ միավորումների և զորամասերի սպառազինությունը և ռազմական տեխնիկան մշտական մարտական կիրառման պատրաստականության վիճակում պահպանումը, հաստիքային տեխնիկայով, սպառազինությամբ, զինամթերքով, հրթիռներով ու ռազմատեխնիկական ունեցվածքով ժամանակին ապահովումը, տեխնիկական ապահովման ղեկավարման մարմինների ու ստորաբաժանումների մասնագիտական պատրաստությունը, զորահանդեսի նախապատրաստումն ու անցկացումը: Տարվա արդյունքներով ՊԲ սպառազինության բաժնի, միավորումների և զորամասերի տեխնիկական մասերի անձնակազմը ցուցաբերել են բավարար տեսական և գործնական պատրաստվածություն: Ընդհանուր առմամբ բանակի տեխնիկական ապահովման ղեկավարման մարմիններն ունակ են կատարելու առջադրված խնդիրները:

Համաձայն զորահանդեսի նախապատրաստման պլանի՝ կազմակերպվել և իրականացվել են սպառազինության, տեխնիկայի ու անձնակազմի ընտրության ու նախապատրաստման մեծածավալ աշխատանքներ: Զորահանդեսին ընդգրկվել են աննախադեպ մեծ քանակությամբ տեխնիկա և հրետանային համակարգեր: Սպառազինության և տեխնիկայի նախապատրաստման աշխատանքները կատարվել են սահմանված ժամկետներում և որակով, ինչն էլ հիմք է հանդիսացել զորահանդեսը պատշաճ մակարդակով անցկացնելու համար:

ՍՈՏ շահագործումն իրականացվել է համաձայն շահագործման և նորոգման տարեկան պլանների: Շահագործման ընթացքում պահպանվել են ռեսուրսի և զինամթերքի ծախսի սահմանված չափաքանակները: Սպառազինության և ռազմական տեխնիկայի շահագործման վիճակի և ստուգումների արդյունքների վերլուծությունը ցույց է տալիս, որ ընդհանուր առմամբ ՍՈՏ շահագործումը կազմակերպվել և իրականացվել է բավարար մակարդակով:

ՍՈՏ ներգրավմամբ իրականացված զորավարժությունների և այլ խոշոր միջոցառումների արդյունքները ցույց են տվել, որ ընդհանուր առմամբ ՊԲ ՍՈՏ-ն մարտունակ է, անձնակազմը ունակ է սահմանված ժամկետներում ՍՈՏ-ն բերել մարտական պատրաստականության վիճակի և կատարել առաջադրված մարտական խնդիրները: Բանակի, միավորումների և զորամասերի տեխնիկական ապահովման զորամասերի ու ստորաբաժանումների գործողությունները ցույց են տվել, որ նրանք նույնպես մարտունակ են, ունակ են սահմանված ժամկետներում ծավալվելու և առկա ուժերով ու միջոցներով կատարելու ՍՈՏ մարտական կիրառման նախապատրաստման և համալիր վերականգնման խնդիրները:

Շարունակվել է զորքերի ապահովումը սպառազինությամբ և ռազմական տեխնիկայով, զինամթերքով ու ռազմատեխնիկական ունեցվածքով: Զորքերն

ապահովվել են մարտական պատրաստության համար նախատեսված զինամթերքով:

Կատարված հատկացումների արդյունքում՝ բարելավվել է զորքերի ՍՈՏ և զինամթերքի սահմանված քանակներով համալրվածությունը, զորամասերին հատկացված տանկերն ու հրետանային համակարգերը լրիվությամբ ապահովվել են զինամթերքի զորային և օպերատիվ պաշարներով [10]:

Իրականացվել են սպառազինության և ռազմական տեխնիկայի տեխնիկական սպասարկման և նորոգման մեծածավալ աշխատանքներ:

Տարվա ընթացքում զորքերի թիկունքային ապահովումը կազմակերպվել և իրականացվել է պլանային կարգով, նպաստելով զորքերի մշտական մարտական պատրաստականությանը, զինանձնակազմի սննդի և կենցաղի բավարար պայմանների հետագա բարելավմանը:

Ուսումնական ծրագրով նախատեսված բոլոր պլանային միջոցառումներն անցկացվել են ժամանակին և նպատակաուղղված են եղել թիկունքայինների մարտավարամասնագիտական ունակությունների կատարելագործմանը, անձնակազմի սննդի ու կենցաղի բարելավմանը, ինչպես նաև նյութատեխնիկական միջոցների պահպանման, նպատակային օգտագործման, հաշիվ-հաշվառման ճիշտ կազմակերպմանն ու վաշտային տնտեսության զարգացմանը:

Ժամանակին իրականացվել է նյութատեխնիկական միջոցների պաշարների համալրում՝ համաձայն հաստատված ժամանակացույցների՝ կազմակերպվել են դրանց թարմացման և ըստ զորային համապատասխան օղակների շարանման աշխատանքները:

Անհամեմատ բարելավվել են մարտական հերթապահություն տանող զորամասերի և ստորաբաժանումների անմիջական թիկունքային ապահովման հարցերը: Մարտական հերթապահության ներգրավված անձնակազմի թիկունքային ապահովման խնդիրները ընդհանուր առմամբ լավ են կազմակերպվել:

Այսպիսով՝ ՊԲ միավորումներում և զորամասերում կատարված 2012-ի ուսումնական տարվա մարտական պատրաստության պլանային միջոցառումները ուղղված են եղել զորքերի մարտական պատրաստականության, կարգապահության բարձրացման ու ԼՂՀ պետական սահմանի հուսալի պահպանությանը և պաշտպանությանը:

Երիտասարդների ռազմահայրենասիրական դաստիարակության և զինվորական ծառայության նախապատրաստման գործընթացի հետագա կատարելագործումը, բանակ-հասարակություն կապի ամրապնդումը, նախնական զինվորական պատրաստության որակի բարձրացումը շարունակվել են ուշադրության կենտրոնում մնալ:

ՊԲ զորամասերում, ԼՂՀ ուսումնական հաստատություններում, պատմամշակութային և ազգային ազատագրական պայքարի հիշարժան վայրերում հասարակական կազմակերպությունների, ՊԲ և զորամասերի հրամկազմերի հետ համատեղ անցկացվել են հանդիսավոր արարողություններ՝ նվիրված՝ ՀՀ, ԼՂՀ տոն և հիշատակի օրերին, Արցախյան ազատամարտի նվիրյալներին, հայ ականավոր պետական, քաղաքական և ռազմական գործիչներին, կազմակերպվել են «Արիության դասերի» ԼՂՀ պաշտպանության և կրթության ու գիտության նախա-

ռարների կողմից հաստատված ժամանակացույցների համաձայն:

Ցուցաբերվել է գործնական օգնություն հանրակրթության քաղաքային և շրջանային բաժիններին՝ ռազմահայրենասիրական և ռազմամասսայական միջոցառումները բարձր մակարդակով անցկացնելու նպատակով: Զորամասերում և ուսումնական հաստատություններում մշտապես տարվել են փորձի ուսումնասիրման և փոխանակման աշխատանքներ՝ բանակ-կրթություն ոլորտների համագործակցության և կատարելագործման ուղղությամբ:

Նախազորակոչային տարիքի պատանիների ամառային արձակուրդներին ԼՂՀ շրջանների, Ստեփանակերտ քաղաքի հանրակրթական հաստատությունների, ՀՀ և սփյուռքից ժամանած թվով 545 պատանիների համար, ԼՂՀ ԿԳՆ-ի հետ համատեղ, երեք հոսքով կազմակերպվել և անցկացվել է «Ասպետ» ռազմամարզական ճամբար, ինչպես նաև աջակցություն է ցուցաբերվել ԱԱՄ-ի «Հայրենյաց պաշտպան» երիտասարդական կազմակերպության ռազմականացված ճամբարի աշխատանքներին, որին մասնակցում էին 120 պատանիներ:

Կազմակերպվել են ռազմամասսայական խաղեր, ՆԶՊ ծրագրով նախատեսված ռազմադաշտային պարապմունքներ հանրակրթական դպրոցների 11-րդ դասարանցիների հետ և ԱԿ-74-ից հրաձգություններ:

Ինչպես ՊԲ ռազմական խորհրդի 2012 թ. արդյունքների ամփոփմանը նվիրված նիստում ունեցած ելույթում Արցախի հանրապետության նախագահն է նշել՝ բանակաշինությունը մեր պետական քաղաքականության գերակա ուղղություններից է: Երկրի ղեկավարի գնահատմամբ՝ 2012-ին ևս բավականին ծավալուն և նպատակասլաց աշխատանքներ են իրականացվել հանրապետության զինված ուժերի շինարարության ոլորտում, այդ թվում՝ բանակի մարտական ու բարոյահոգեբանական պատրաստության, ղեկավարման համակարգի արդյունավետության բարձրացման, մարտական հնարավորությունների ընդլայնման, զորահավաքային պատրաստականության կատարելագործման և մի շարք այլ ուղղություններում [11]:

Այսպիսով՝ 2012 թվականի ադյունքներով նվաճումներ ու ձեռքբերումներ են արձանագրվել բանակաշինության բոլոր ոլորտներում, ինչը մեր հանրապետության պաշտպանունակության բարձրացման և անվտանգության գրավականն է:

ՇԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Հարությունյան Մ. Ա., Բանակաշինության 2012 թվականի հիմնական նվաճումները, «Մարտիկ», NN 51-52, 24-31 դեկտեմբերի 2012, էջ 2-6:
2. Հարությունյան Մ. Ա., ԼՂՀ պաշտպանության բանակի մի քանի առանձնահատկությունների մասին, Ստ., ԼՂՀ ՊՆ հրատ., 2010, էջ 36:
3. Տե՛ս նույն տեղում, էջ 29:
4. Տե՛ս ԼՂՀ պաշտպանության նախարար, ՊԲ հրամանատար, գեներալ-լեյտենանտ Մ. Հ. Հակոբյանի շնորհավորական ուղերձը գալիք Ամանորի և Սուրբ

Ծննդյան տոների կապակցությամբ, «Մարտիկ», N 51-52, 24-31 դեկտեմբերի 2012, էջ 1:
5. Տե՛ս Հասրաթյան Ս. Ռ., Հաղթող բանակի զորահանդեսը, Եր., «Տիգրան Մեծ», 2013:
6. Տե՛ս «Մարտիկ», NN 51-52, 24-31 դեկտեմբերի 2012, էջ 2:
7. Ավելի հանգամանալից տե՛ս Հարությունյան Մ. Ա., Մարտունակության բարձրացումը՝ խաղաղության բարձրացման գրավական, «Մարտիկ», N 39-40, 29 սեպտեմբերի-13 հոկտեմբերի 2012, էջ 2
8. Մկրտչյան Ն. Յ., Վ. Բ. Յարամիշյան, Ինչպես արդյունավետ աշխատել անձնակազմի հետ: Ուղեցույց, երկրորդ, բարեփոխված հրատ., Ստեփ., «Պոլիգրաֆ», 2012:
9. Տե՛ս նույն տեղում, էջ 188-191:
10. Տե՛ս «Մարտիկ», N 45, 10-17 նոյեմբեր, 2012:
11. Տե՛ս «Ազատ Արցախ» (հանրապետական թերթ), N 150, 27 դեկտեմբերի 2012:

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ԱԱՄ- Արցախի ազատամարտիկների միություն
ԱԿՀ - ավտոմատ կառավարման համակարգեր
ՌԷՊ – ռադիոէլեկտրոնային պայքար
ՍՈՏ – սպառազինություն և ռազմական տեխնիկա

РЕЗЮМЕ
Страница из истории военного строительства в Арцахе
Мгер Арутюнян

В статье показаны достижения военного строительства в Нагорно-Карабахской Республике за минувший год. Боеготовность вооруженных сил республики достигла качественно нового уровня развития. Боеготовная мобильная армия является гарантом мира, процветания и обороноспособности нашей страны. В 2012 году все усилия командования и личного состава АО были направлены на дальнейшее усовершенствование боевой и мобилизационной выучки, боевого дежурства и инженерных сооружений, создание надежной и устойчивой обороны, повышение воинской дисциплины, высшей степени боеготовности и боевого применения вооружения и боевой техники, дальнейшее улучшение условий жизни и быта военнослужащих.

SUMMARY

The Page from the History of Military Construction in Artsakh

Mher Haroutyunyan

The article represents the achievements of the military construction in the Nagorno-Karabakh Republic during the last year. The fighting capacity of the Armed Forces of the republic attained a qualitatively new level. Well - prepared and mobile army is the guarantor of peace, prosperity and defense capability of our country. In 2012 all the efforts of the Defense Army command and staff were directed to the further improvement of fighting and mobilization training, fighting watch and engineering constructions; the creation of reliable and steady defense; the increase of the military discipline, the highest degree of fighting capacity and the use of fighting arms and military equipment; further improvement of the life and living conditions of the military personnel.